

**Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջան
Անգլերեն Սովորողների Խորհրդի Շրջանային Կոմիտե
Շրջանային գրասենյակ-երրորդ հարկ-ժողովների սենյակ**

**Օրակարգ
Չորեքշաբթի, ապրիլի 10, 2019
Առավոտյան ժամը 9:30 – 11:30**

	2.1ա Գլխավոր ծրագրի մշակումը անգլերեն սովորողների համար	X	2.2 Մեմինար պարապմունք DELAC-ի անդամների համար
	2.1բ Կարիքների գնահատման շրջանային քննություն անցկացնել յուրաքանչյուր դպրոցում		2.3 Համախմբված դիմումը մշակվել է DELAC -ի առաջարկների հիման վրա
X	2.1գ Շրջանային ծրագրեր և նպատակներ հաստատել անգլերեն սովորողների համար		2.1գ Վերանայել և ակնարկել ծնողներին/պահապաններին ուղարկվող գրավոր հաղորդակցության վերաբերյալ
	2.1դ Ծրագիր մշակել ուսուցիչների և օգնականների պահանջները համապատասխանեցնելու համար	X	2.1ե Վերանայել և ակնարկել LCAP ծրագրի մշակման վերաբերյալ
	2.1ե Վերանայել և ակնարկել շրջանի վերադասակարգման գործընթացը		2.3 Համախմբված դիմումը մշակվել է DELAC -ի առաջարկների հիման վրա

Ներկա ծնողները.

Հիլդա Գալլեն, Տատյան Լևինա, Նուրիա Լունբերգ, Սիդիա Վալքի

Ներկա աշխատակիցներ.

Անա Արզումանյան, Էնջի ԴՄելլո, Ջենիֆեր Գոլդենբերգ, Մաթ Հիլլ, Կիրստեն Ջակսոն, Լոռի Քելլի, Փիտր Քնապիկ, Ջոն Պարամո Էստելա Մերմենո, Սոնլե Վորչակ,

I. Ժողովի բացումը – այն բացվեց առավոտյան ժամը 9:31-ին.

- A.** 2019 թվականի փետրվարի 13-ի և մարտի 13-ի Ժողովների բովանդակությունների հաստատումը: Փետրվարի 13-ի ժողովի բովանդակության հաստատումը տեղափոխվեց հաջորդ ժողովի ընթացքում հաստատվելու համար, ճշտությունը ապահովելու համար: Թարգմանիչը չէր ստացել բովանդակության վերջին օրինակը: Օրիորդ Քելլին առաջարկեց հաստատել մարտի 13-ի ժողովի բովանդակությունը, հետևյալ փոփոխությամբ. Տիկին ԴՄելլոն պարզաբանեց, որ V, A, vi մասում, «Ընկերական համակարգ»-ը ներկայացվել է նաև Վաշինգտոն և Էմերսոն դպրոցներում, որը հետաքրքրել է ծնողներին: Օրիորդ Լևինան երկրորդ անձն էր, որ առաջարկեց հաստատել ժողովի բովանդակությունը:
- B.** Առաջարկված օրակարգի հաստատումը.

Տիկին Գոլդենբերգը առաջարկեց հաստատել օրակարգը փոփոխելով կետերի հերթականությունը: Դոկտոր Պարամոն կիսուսի իրավական պահանջների մասին ժողովի բովանդակության հաստատումից առաջ:

II. Իրավական պահանջներ.

A. Վերանայել և ակնարկել LCAP ծրագրի նպատակ 8-ը և 9-ը.

- i. Դոկտոր Պարամոն տեղեկացրեց մայիսի 15-ին քաղաքապետարանում տեղի ունեցող DELAC ժողովի մասին:
- ii. Դոկտոր Պարամոն վերանայեց «2018-2019 LCAP բյուջե, նպատակ 8» ձեռնարկը: Հարցեր չկային:
- iii. Դոկտոր Պարամոն վերանայեց «Տեղական Հսկողության և Հաշվետվողականության ծրագիր, նպատակ 8 և 9-ը»:
 1. Վերջերս, Կրթական գրասենյակը դադարեցրեց տեխնոլոգիայի գլխավոր ծրագրի հաստատումը, ֆինանսական հաստատուն աղբյուրի բացակայության պատճառով:
 2. Ծնողներին հավելյալ տեղեկություն էր հարկավոր տարածահարկի պարտատոմսի վերաբերյալ և ցանկացած իմանալ, թե արդյոք պետք է քվեարկության մեջ դրվի: Շատ մեծ է երկրորդ փորձը հետապնդելու ներուժը: Համայնքը հավելյալ տեղեկություն կստանա տարածահարկի վերաբերյալ, որը քվեարկության մեջ կդրվի 2020 թվականին: Դոկտոր Հիլըր ասաց, որ հարցաթեթիկի միջոցով կորոշեն իրենց հաջորդ քայլը և 2020 թվականի որ ամսին դրվի այն քվեարկության մեջ, մարտին, թե՞ նոյեմբերին:
 3. Շրջանը պետք է 2 ու կես միլիոն դոլարի կրճատում կատարի՝ աճող աշխատավարձերը վճարելու համար: Ծնողները կարող են աջակցել շրջանին մյուս ծնողների և համայնքի անդամներին բացատրելով, թե ինչ նշականակություն ունի այդ պարտատոմսը:
 4. Նպատակ 9.1- Տիկին Լունբերգը ավելացրեց, որ շրջանի հաղորդագրական կապը բարելավելու համար, հաղորդագրական բաժանմունքը առաջարկությունների կարիք ունի: ELAC-ի և DELAC-ի անդամները կարող ենք հայտնել իրենց կարծիքները:
 5. Տիկին Լունբերգը բարի գալստյան խոսք ասաց և մեկ առ մեկ ծանոթացրեց DELAC-ի անդամներին նոր ծնողի հետ:

B. Դոկտոր Քնապիկը խոսեց ժողովի բովանդակությունը գրանցելու պահանջների մասին: Նա պարզաբանեց, որ պետք է քննարկել օրակարգում նշված բոլոր կետերը: Այդ չափանիշների վերաբերյալ տրված բոլոր տեղեկությունը պետք է նշվի ժողովի բովանդակության մեջ: Ծնողների ունեցած ընդհանուր մտահոգությունները կարել է նշել ժողովի բովանդակության մեջ, բայց ոչ նրանց տված անձնական տեղեկությունը: DELAC ժողովի անդամներից բացի, ոչ մեկը չի կարող փոփոխել ժողովի բովանդակությունը: Ցանկացած լրացում կամ փոփոխություն պետք է կատարել հաջորդ ժողովի ընթացքում: Դոկտոր Հիլըր ասաց, որ Կրթական

գրասենյակի ժողովները տևում են 3-5 ժամ, բայց բովանդակությունը շատ կարճ է ներկայացվում:

- C.** Օրիորդ Վալքին հարցրեց, թե ինչ կպատահի, եթե ոչ մի ծնող ներկա չգտնվի DELAC ժողովների ընթացքում: Տիկին Գոլդենբերգը ասաց, որ ժողովը տեղե կունենա, իսկ ժողովի ընթացքում քվեարկության կարիք ունեցող ոչ մի կետի վերաբերյալ քվեարկություն չի կատարվի: Երբ հաստատվեն օրենքները, DELAC-ը պահաջվող ձայների քանակի (quorum), կարիք կունենա, որ պետք է հավասար լինի 9-ի՝ այսինքն՝ 9 ներկայացուցիչ 16 դպրոցի համար, քվեարկությունը անցկացնելու համար: Տիկին Արգումանյանը հիշեցրեց կոմիտեին, որ DELAC ժողովների ընթացքում ավելի շատ ծնողներ էին ներկա գտնվում, երբ դպրոցների թարգմանիչները նույնպես ներկա էին գտնվում ժողովին: Օրիորդ Քելլին նշեց, որ իր վերանայած շրջանի DELAC-ի օրենքներից գոնե կեսի ժողովները գումարվում են երեկոյան ժամերին: Տիկին Գոլդենբերգը ասաց, որ Բրբենքում երեկոյան DELAC ժողով գումարելիս ավելի քիչ ծնող էր ներկագտնվում: Տիկին Լուներբերգը ասաց, որ իրեն դուր է գալիս, թե ինչպես է Ջորդան դպրոցը, իրավական պահանջները ներկայացնելիս ELAC ժողովները գումարում երեկոյան, իսկ ոչ պաշտոնական «Եկեք խոսեք/աբլամոս» ժողովները՝ առավոտյան:

III. Չավարտված գործեր.

- A.** «Ընկերական համակարգ» անգլերեն սովորող աշակերտների ծնողների համար և ծնողական կենտրոններ.

i. «Ընկերական համակարգ». Տիկին Լուներբերգը, տիկին Վալքին և տիկին Գոլդենբերգը փորձական ծրագիր կմշակեն, մինչև կրթական գրասենյակին ներկայացնելը՝ դպրոցների տնօրեններին ներկայացնելու համար:

1. Տիկին Վալքին ասաց, որ Պրովիդենսիա դպրոցում շատ հեշտ է ոչ պաշտոնական կերպով մոտենալ և խոսել ծնողների հետ: Նա ցանկացավ իմանալ, թե ում առաջարկն էր այն DELAC -ի, թե՞ տիկին Լուներբերգի, և ավելի լավ կլիներ եթե այն պարունակեր ծնողի անուն: Նա ասաց, որ այն կարելի է ներկայացնել ոչ պաշտոնական ձևով: Տիկին ԴՄելլոն ասաց, որ իր կարծիքով, «Ընկերական համակարգ»-ի մասին խոսվել է նախորդ DELAC և ELAC ժողովների ընթացքում: Համաձայնությունը կայանում է այն բանում, ով DELAC-ը ցանկանում է բարելավել համայքը, և օգնություն ցուցաբերել բոլոր ծնողներին, նույնիսկ եթե նրանք անգլերեն սովորողներ չեն:

ii. Ծնողական կենտրոններ. Տիկին Լուներբերգը և տիկին ԴՄելլոն ասացին, որ ծնողները հայտնել են, որ իրենց կարիքները բավարարվում են դպրոցի և շրջանի աշխատակիցների կողմից: ELAC-ի կամ DELAC-ի ներկայացուցիչներից ոչ մեկը կարիք չունի ծնողական կենտրոնի:

- A.** Շրջանի կայքը և տեղեկություն ELD ծրագրի մասին- կներկայացվի հաջորդ ժողովի ընթացքում:
- B.** Լեզվի Տարեկան Հաշվառման արդյունքները.
 - i.** Տիկին Գոլդենբերգը վերանայեց «Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանում խոսվող լեզուները. 2018-2019 ուսումնական տարի» ձեռնարկը. ԲԴՄՇ-ի անգլերեն սովորողների կողմից ամենաշատ խոսվող լեզուներն են.
 1. 44%-ը խոսում է հայոց լեզվով,
 2. 34%-ը խոսում է իսպաներեն լեզվով
 - ii.** Տիտղոս III հասանելի էմիգրանտներ. Էմիգրանտների մեծամասնությունը գալիս են Հայաստանից և Հնդկաստանից, չնայած որ անգլերեն սովորողների մեծամասնությունը ծնվել է այստեղ:

IV. Նոր գործեր.

- B.** DELAC-ի օրենքները – կներկայացվի հաջորդ ժողովի ընթացքում:

V. Նախագահի զեկուցումը.

- A.** 2019 թվականի ապրիլի 23-ին, երեկոյան ժամը 6-ից 8-ը, Ջոն Բրոգ միջնակարգ դպրոցում, տեղի կունենա Ուսումնական տեխնոլոգիայի կառավարիչ, Բաբ Մարտենի կազմակերպած, ծնողական հանդիպումը, շրջանի «Վահանակ» (Dashboard) ռեսուրսը ծնողներին ներկայացնելու համար:
- B.** Դպրոցական շրջանը \$400,000 դոլարի նվիրատվություն է ստացել Մասնագիտական Տեխնիկական Կրթության (CTE) ծրագրին աջակցելու համար:

VI. Հասարակական ակնարկներ.

- A.** Տիկին Վալքին հարցրեց, թե արդյոք պարտադիր է, որ յուրաքանչյուր դպրոցի ELAC-ի ներկայացուցիչ ներկա գտնվի DELAC ժողովին և ներկայացված նյութերը ներկայացնի դպրոցի ELAC ժողովի ընթացքում: Տիկին Գոլդենբերգը պատասխանեց, որ իրենք քաջալերում են այդ ներկայացուցիչներին ներկա գտնվել: ELD մասնագետները և կազմակերպիչները ամսեկան ժողովներ են գումարում և արդեն ներկայացնում այդ նյութերը:

VII. Ժողովի վերջը – այն ավարտվեց առավոտյան ժամը 11:50-ին:

Բրբենքի Միացյալ Դպրոցական Շրջանը հետևում է, որ կրթական հավասարություն լինի բոլոր անհատների համար: Շրջանի ծրագրերն ու գործունեությունները գերծ պիտի լինեն **անօրինական խտրականությունից, ներառնելով խտրականություն որևէ անհատի կամ խմբի նկատմամբ, որը հիմնված է նրա ռասայի, մաշկի գույնի, ծագման, ազգության, ազգային ծագման, ներգաղթի կարգավիճակի, էթնիկ խմբերի ճանաչման, էթնիկության, տարիքի, կրոնի, ամուսնական կարգավիճակի, հղիության, ծնողական կարգավիճակի, ֆիզիկական կամ հոգեկան անկարողունակության, սեռի, սեռային կողմնորոշման, սեռային ինքնության, սեռային արտահայտության կամ սեռային տեղեկության, մեկ կամ մի քանի իրական կամ ընկալվող հատկանիշներ ունեցող անհատի կամ խմբի վրա:**